



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրառատ համայնք,
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Ջրառատ, Հեռ. (0231) 60575, jraratgyux@mail.ru

N 235

06 օգոստոս 2020թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՀԱՄԱԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան մարզպետ

Կից ներկայացնում ենք Արմավիրի մարզի Ջրառատ համայնքի ղեկավարի 2020 թվականի առաջին կիսամյակի հաշվետվությունը:
Առդիր՝ 4 թերթ

Համայնքի ղեկավար՝



Ս. Գալստյան

Կար. Աշխարակազմի քարտուղար /2-րդ դասի խորհրդական/ Մ. Առաքելյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

5 օգոստոսի 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Գործավարություն

2020թի 1-ին կիսամյակի ընթացքում համայնքի բնակիչներից ստացվել է 16 դիմումներ և առաջարկություններ: Համայնքի բնակիչներին տրամադրվել են 283 հատ տեղեկանքներ, բնութագրեր: Հղվել են 198 հատ պաշտոնական գրություններ մարզային և ֆեդերալ ենթակայության կառույցների ղեկավարներին: Համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 21 որոշում, արձակվել է 9 կարգադրություն:

2. Ավագանու գործունեություն

2020 թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում համայնքի ավագնին գումարել է 1 հատ արտահերթ իսկ հերթակա նիստը չի կայացել: Արտահերթ նիստերը հրավիրվել են համայնքի համար խիստ հրատապ հարցերի քննարկման և լուծումներ տալու համար:

3. Գյուղատնտեսության ոլորտ

Հաշվետու ժամանակահատվածում համայնքի առկա հողատարածքներն ու ցանքերն են՝

Բնակավայրային նշանակության հողեր -320հա.

Գյուղ. նշանակության հողատարածք -564 հա, որից՝

Խաղողի այգի -5.1 հա

Պտղատու այգի -17,8հա ստացել ենք 200,9գ. ծիրան 110.0գ, կերաս 50,0գ բալ, սալոր 46 գ, բերք ընդհանուրը 296,9գ: շարունակելի է:

2019 թվականին աշնանը կատարվել է 5,5հա հացահատիկի բերքը 170. 6g , գարին 2 հա, բերքը 70,0 g գարի ,գարնանացան հացահատիկային և մշակաբույսեր ընդամենը 15հա: 34,8հա բազմամյա խոտհարքներ, 34,8 հա որից 975 g, լոբի 4,0հա 700,0g. , կարտոֆիլ 13,5հա 3720,0g.բերք, բոստանային կուլտուրաները՝ ձմերուկ 15հա, սեխը 3, 0 հա , վարունգ 10,0հա 10006,0g. բերք, լոլիկը 19,0հա 7400,0g. բերք, 0,8 հա սոխ, 0,2 հա սխտոր , պղպեղ 54,0հա ստացվել 5128, 0g բերք, սմբուկը 21,0 հա ստ. 3900,0 g բերք, կաղամբ 14,0 հա ցանք ստացվել 6600,0 g բերք, սեղանի ճակնդեղ 0,5 հա, գազար 0,7հա և այլը 6,7հա, եգիպտացորենը 13,0 հա, որը շարունակելի է: ընդհանուր բանջարոցային մշակաբույսերը 215,0հա: Իսկ բերքը հուլիսի 1-ի դրությամբ բերքը շարունակվում է:

Անասնազլխաքանակ

Խոշոր եղջերավոր անասուններ 344 գլուխ, որից՝ կովեր 93 գլուխ
Մանր եղջերավոր անասուններ 85 գլուխ ոչխար, որից՝ մայրեր 6
42 գլուխ խոզեր, որից մայրեր՝ 5

Մեղվաընտանիք -60, թռչուն -2618

Համայնքում զբաղվում են ջայլամաբուծությամբ կա 7 հատ ջայլամ, հնդկահավ 28 թև:

4. Հողի հարկ և գույքահարկ.

2020 թվականին առաջին կիսամյակի ընթացքում համայնքային բյուջեով նախատեսվել է 5403,2 հազար դրամ հողի հարկ: 01.07.2020 թ.-ի դրությամբ նախատեսվել է 1801,2 համայնքի հողօկտագործողներից գանձվել և մուտք է արվել համայնքի բյուջե 705,0 հազար դրամ հողի հարկ, որը կազմում է համայնքի հողի հարկի կիսամյակի պլանի 39,1 %: Գույքահարկը բյուջեի եկամտային մասով նախատեսվել է 8532,1 հազար դրամ: 01.07.2020 թվականի դրությամբ նախատեսվել է 2844,1 հազար դրամ գանձվել և մուտք է արվել համայնքի բյուջե 1316,5 հազար դրամ, որը կազմում է կիսամյակային պլանի գույքահարկի 46,3% ը :2020 թվականի բյուջեով նախատեսվել է տեղական տուրքեր 100,0 հազ.դրամ 01.07. 2020 թվականի նախատեսված է 33,3 հազար դրամ մուտք է եղել համայնքի բյուջե 4,9 հազար դրամ դրամ և տեղական վճարներ 4924,0 հազ.դրամ 01.07.2020թվականին նախատեսվել է 1641,3 հազար դրամ և փաստացի մուտք է եղել համայնքի բյուջե 25,7 հազար դրամ 2020թվականին բյուջեով պետության կողմից կիսամյակի ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիան կազմել է կիսամյակի համար 30195,3 հազար դրամ, որից փաստացին ֆինանսավորվել է 30195,3 հազ. դրամ 100 % ով, համայնքի վարչական տարածքում գտնվող 2020 թ սեփական եկամուտները նախատեսվել են 19913,3 հազար դրամ: 01.07.2020թվականի դրությամբ առաջին կիսամյակում նախատեսվել է հավաքագրել 6637,8 հազար դրամ, հավաքագրվել է 2930,1 հազար դրամ , սեփական եկամուտները կատարվել է կիսամյակի դրությամբ 44,1 % -ով: 2020 թվականի տարվեսկզբի մնացորդը կազմում է 51389,9 հազար.դրամ:

Ծախսեր

Ջրատառի համայնքապետարանը 01□ 01.2020 թվականից մինչև 01.07.2020 թվականը առաջին կիսամյակի ընթացքում կատարել է հետևյալ ծախսերը:

1. վճարել է ընթացիկ աշխատավարձ 7377,1 հազար դրամ:
2. վասնագիտական ծառայության համար փոխանցվել է 18,8 հազար դրամ
3. համակարգչային ծառայության համար փոխանցվել է 90,4 հազար դրամ
4. փոխանցվել է էլեկտրոններգիայի և գազի օգտագործման գումար – 2162,1 հազար դրամ
- 5 Գրենական պիտույքներ ձեռք բերելու համար փոխանցվել է 0 դրամ
7. Անապահով ընտանիքների ցուցաբերվել է դրամական օգնություն 0 դրամ:
8. Արքահանություն համար 561,0 հազ. դրամ:
9. Տնտեսակն միջոցներ ձեռք բերելու համար փոխանցվել է 0 դրամ:
10. Տեղեկատվական ծառայություն 0 դրամ:
11. մանկապարտեզին փոխացվել է սուբսիդյա 5924,4 հազար. դրամ:

12. կապի ծառայություն 81,7 հազար դրամ:
13. շենք շինության կապիտալ վերանորոգում դրամ
14. ներքին գործողումներ 22,0 հազար դրամ:
15. ներկայացուցչական ծախսեր 0 դրամ
16. գույքի և սարքավորումների վարձակալություն 0 դրամ
17. տրանսպորտային նյութեր 163,3 հազար դրամ
18. հակակարտային կայանների լիցքավորում հեղուկ գազով 270,0 հազար դրամ

Ազգաբնակչություն.

ա) Համայնքի փաստացի բնակչությունը կազմում է 3181 մարդ:
2020 թվականի ընթացքում Ջրառատ համայնքում ծնվել է 10 երեխա, գրանցվել է 16 մահ:
Ընտանեկան նպաստ ստացողներ 58 ընտանիք
Համայնքում թոշակառուները 243 հոգի են:

5. Կրթություն և գիտություն

Համայնքում գործում է մեկ դպրոց 384 աշակերտով: Մեկ մանկապարտեզ՝ հաճախում չի եղել և 16 աշխատողով:

6. Մշակույթ

Համայնքը ունի մեկ մշակութի տուն 1 աշխատողով, գրադարանը չի գործում:
Սպորտի խմբակներ բոնցքամարտի, արմֆայթինգ, մարտեր առանց կանոնների և ծանրամարտ:

7. Առողջապահություն.

Համայնքում գործում է բժշկական ամբուլատորիա 9 աշխատողով:

8. Զինակոչ.

Համայնքի ղեկավարի և աշխատակազմի գործուն աջակցությամբ պատշաճ կերպով կազմակերպվել է 2020 թ-ի ձմեռային զինակոչը ունեցել էք 6 զինակոչիկ և կատարվել է պլան առաջադրանքը:

9. Աղբաթափության ոլորտ

Շաբաթը մեկ անգամ իրականացվում է համայնքի փողոցների աղբահանությունը:

10. Համայնքի հիմնախնդիրներ.

ա) Համայնքի հիմնախնդիրներից է համարվում համայնքային նշանակության ճանապարհների նորոգում «**ասֆալտապատում**», որը կկազմի մոտ 450,0 միլիոն դրամ:

բ) Վերանորոգման կարիք ունի նաև համայնքապետարանի շենքը, որի ընդհանուր ծախսը կկազմի մոտ 20.0 միլիոն դրամ:

գ) Մշակույթի տուն- 150,0 միլիոն դրամ:

դ) համայնքի հիմնախնդիրներից է նաև համայնքի նոր թաղամասերի արտեզյան ջրհոր հորատելը:

ե) Բժշկական ամբուլատորիայի շենքի կառուցման համար 21842,9 միլիոն դրամ:

զ) Ոռոգման ջրատարի անցկացում 200000 միլիոն դրամ::

Ջրառատի համայնքապետ



Ս. Գալստյան